կամ կիրք մը ներկայացընելով կտաւի կամ մարմարիոնի վրայ, ի-
րենց մեր վրայ ըրած ազդեցութիւնն ալ վայրկենական կ'ըլլայ։ Ե-
որովհետև այս կերպ յիշատակարան մը անբաժանական է և յա-
յորդութեան անընդունակ ամենեին, և հետևաբար անայլայլելի՝ նը-
կատմամբ կերպարանաց և կրից, չենք դառնար նկատել զայն մոռցով
որ այնչափ մեզի հաճելի երևցած էր։ Իսկ ճարտասանութիւն և բա-
նաստեղծութիւն բոլորովին ներհակ արդիւնք կ'ընծայեն մեզի, կամ
խօսք կամ գրէ՝ բառից նշանագրութեամբ։ Որչափ որ առնք յաջոր-
դաբար գործողութիւններ և կրքեր կը ներկայացընեն, աստիճանա-
բար յառաջ կ'երթան, և հետզհետէ կ'ուժին, այնչափ ալ իրենց զա-
նազան և մերթ ընդ մերթ ցնցմամբ՝ կ'անդրադարձընեն չարունակ
մեր հոգւոյն մտադրութիւնը՝ սրտի միջոցով, զգացողութիւններս եր-
կայն ատեն գործադրութեան կը զբաղեցընեն, կ'ազնուացընեն զայն
և փոփոխ և զգայուն կ'ընեն գեղեցկին ներկայութեամբ։

Շարունակելի Հ. Թ. Թովմաեան

ԱՇՈՒՂ ԵՒ ՄԵԾԱՏՈՒՆ

Ջեռքը կիթառ, արխուր Աշուղ
Երգեր կ'երգէր յոյժ սրբտաբուղխ.
Աչքերը փակ չէին տեսնար,
Նա գրունէ դուռ հաց կը մուրար։
Դողդոջ ազդու և մեղմ ձայնով
Կիթառին հետ դաշնակելով՝
Նա լրսողաց սրբտերուն խոր
Կ'արթընցընէր կիրք նորանոր։
« Ողորմեցէք, տէրք և տիկնայք նազելի,
« Թող գութ չարժէ ձեր սիրտ իմ բաղդ եղկելի.
« Աստուծոյ լոյսն ինձի համար է խաւար,
« Ա՜հ ձեր դէմքեր, աւա՜ղ, ափսո՜ս չեմ տեսնար.
« Ողորմեցէք տընանկ անլոյս աղքատին
« Որ՝ լուսի մէջ օր մի հանգչի ձեր հոգին։»
« Դուք ունիք աչք, տուն, ընտանիք, շատ բարիք.
« Ինտէր գըլխիս կը պակսի տուն և հացիկ։
« Ջեմ գանգատել, գիտեմ Տիրոջն աղքատաց
« Կը պակասէր գըլխոյն ներքև շատ հեղ բարձ։
« Ողորմեցէք տընանկ անլոյս աղքատին
« Որ՝ լուսի մէջ օր մի հանգչի ձեր հոգին։»
« Վայելեցէք երկնաւորին տուրք, պարգև՝

digitised by A.R.A.R.@

«Այլ մի՛ մնաք դուք, յիշեցէք, կայ վերև
«Աղքատաց տէրն և մեծատանց դատաւոր,
«Որոյ առջև չըկայ հարուստ չըքաւոր։
«Ողորմեցէք ընտանիք անլոյս աղքատին
«Որ՝ լուսի մէջ օր մի հանգչի ձեր հոգին։
«Զըլլինի թէ՝ անլոյս մընաք դուք անդին,
«Նլանելով ի մութ խաւարն արտաքին,
«Եւ լըսէք դուք. Ջուր ծարաւին չըտուիք,
«Մերկ, քաղցածին՝ մի պատառ հաց, հանդերձիկ։
«Ողորմեցէք ընտանիք անլոյս աղքատին
«Որ՝ լուսի մէջ օր մի հանգչի ձեր հոգին։»
Մի անօգորմ, խելքէ թեթև Մեծատուն
Ուշ դընելով օր մի սորա երգերուն
«Ա՛յդպէս, ասաց, լըսողներուն վախ տալով,
«Կարծես ժողվել բաւակ անհամ երգերով.
«Քու չար սըրտիդ պատիժն առել ես արդէն
«փոխան երգի, մուրա՛ անցնող դարձողէն։»
Այս խօսքերէն Աշուղին սիրտը խոցուած
Մի լուրջ ձևով այս ծանր խօսքերը ասաց.
«Մարդ խաբելու միտք չունիմ՛ ես,
«Ողորմութիւն տո՛ւր՝ թէ կ'ուզես.
«Կոյր լինելու համար հարկ չէ
«Որ՝ դադարիմ ես երգելէ.
«Չէ՞ որ կոյր էր և Հոմեր,
«Այլ ի՞նչ երգեր նա կ'երգէր։»

Հ. ՔԵՐՈՎԲԷ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

ՈՒՂԵՐՁ

ԱՌ ՑԱՐԳՈՅԱՊԱՏԻՒ ՀԱՅՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Բարւոյն՝ վսեմին, եւ գեղակիրթ ճըշմարտին
Ծնայ սիրահար. ես պատանի դեռ անմեղ
Որոշեցի լըսել դըրդմանցն իմ սըրտին,
Ուր ըզգայի գեղոյն ճաշակ քաղցր համեղ։

Բայց ո՛ տայր ինձ նոցա վայելքն հոգեսփոփ,
Ուսումն եւ մարզ պատանեկիս սիրազգաց,

digitised by A.R.A.R.@